HAL
open science

.

Arestakes Simavoryan

▶ **To cite this version:**

Arestakes Simavoryan. . . Globus: National Security, 2009, 7 (3), pp.8-19. hal-03289462

HAL Id: hal-03289462

https://hal.science/hal-03289462

Submitted on 3 Aug 2021

HAL is a multi-disciplinary open access archive for the deposit and dissemination of scientific research documents, whether they are published or not. The documents may come from teaching and research institutions in France or abroad, or from public or private research centers.

L'archive ouverte pluridisciplinaire **HAL**, est destinée au dépôt et à la diffusion de documents scientifiques de niveau recherche, publiés ou non, émanant des établissements d'enseignement et de recherche français ou étrangers, des laboratoires publics ou privés.

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ. ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արեստակես Միմավորյան

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող գլոբալ փոփոխությունները, որոնք անմիջականորեն անդրադառնում են հասարակությունների ու պետականությունների վրա, վերլուծվում և գնահատվում են ոչ միայն ակադեմիական կառույցների կողմից: Դրանով զբաղվում են նաև վերլուծական կենտրոնները, որոնք արևմտյան հասարակությունում ստացել են «think-tank»[1], այլ կերպ՝ «ուղեղային կենտրոն» անվանումը (այսուհետ՝ ՈւԿ): ՈւԿ-ների հետազոտության ոլորտներն այնքան բազմազան են, որ մասնագիտական գրականությունում շատ անգամ հնարավոր չի լինում այդ կառույցներին կոնկրետ սահմանում տալ[2]:

Թուրքիայի ՈւԿ-ներն այսօր ուսումնասիրում են բազմաթիվ բնագավառներ՝ քաղաքագիտականից մինչև սպորտային, իսկ համացանցային և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, գիտակրթական նորանոր ձեռքբերումների հետ միասին մատչելի դարձավ նաև տեղեկություն ստանալը, ինչն առաջ բերեց նաև տեղեկատվական հոսքերի ընդգրկուն տիրույթ: Եվ շատ դեպքերում կենտրոնները հիմնվեցին այդ տիրույթում եղած տեղեկատվական նյութի հայթայթման, մշակման, վերահսկման և վերլուծման համար: Սակայն նման կառույցների հիմնումը միայն վերոհիշյալ գործոնների հետ չէր կապ-

[1] 1950-ական թթ. «think tank»-ը «ուղեղային տրեստ» էր համարվում, որը երբեմն համարժեք էր դառնում «brain trust» արտահայտությանը: 20-րդ դ. առաջին կեսին տերմինը գլխավորապես օգտագործվում էր պետական վերլուծական կառույցների համար: Հայտնի նման «տրեստներից» էր ԱՄՆ նախագահ Ֆ.Դ. Ռուզվելտի վերլուծական կենտրոնը: «Think tank» տերմինը սկսեց օգտագործվել Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, որով առավելապես նշվում էին բրիտանական և ամերիկյան պետական ռազմավերլուծական կառույցները: Պատերազմից հետո տերմինի նշանակությունը լայնացավ, այն բնութագրում էր արդեն ցանկացած քաղաքագիտական-փորձագիտական կառույց (Федор Войтоловский, «Производство» интеллектуального пространства мировой политики, http://www.intertrends.ru/eleventh/008.htm).

[2] ՈւԿ դիպուկ ձևակերպում կա ՄԱԿ փաստաթղթերից մեկում. «Ուղեղային կենտրոնը» կազմակերպություն է, որը կատարում է հետազոտություն և քաղաքական տարբեր ասպեկտների համար առաջարկություններ ի հայտ բերում: Նմանատիպ կառույցները «կամուրջ» են գիտական շրջանակների և իշխանության միջև» (А.И. Сенаторов, Японские «мозговые центры», http://www.japan-assoc.ru/publikacii/nauka/japon-opyt-2007-1/japonskie-mozgovye-centry.html).

ված. դրանց ի հայտ գալուն նպաստում էին նաև աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումները:

Ավանդաբար ՈւԿ-ների առաջացումը շաղկապվում է ԱՄՆ պետության պատմության հետ, որի ձեռքբերումներն այս ոլորտում շոշափելի են: Այսօր ԱՄՆ-ը տարոլորտ հետազոտություններ կատարող ՈւԿ-ների առաջատար երկիր է: ՈւԿ-ն համարվում է ամերիկյան հայտնագործություն, առաջատար համարվող կենտրոնների փորձագիտական մտքի հետ հաշվի են նստում ԱՄՆ պետական համակարգի պաշտոնյաները: Դրանք ազդեցիկ դերակատարում ունեն հասարակության կարծիքի ձևավորման հարցում: ԱՄՆ փորձը դասական օրինակ դարձավ մի շարք եվրոպական երկրների համար, որոնք աստիճանաբար անցան ՈւԿ-ների ամերիկյան մոդելին՝ այն հարմարեցնելով իրենց պետական ռազմավարական հիմնահարցերին:

Հետ չմնաց նաև Թուրքիան, որի վերլուծական կենտրոնների հիմնադրման մեջ մեծ դերակատարում ունեցան ԱՄՆ առանձին գերատեսչություններ, հատկապես ռազմական ոլորտի փորձագետները: Թուրքիայի ՈւԿ-ների ստեղծման պատմությունը ներկայացնենք երկու մասով:

1. Առաջին սերնդի թուրքական վերլուծական կենտրոնները

Թուրքիայի վերլուծական կենտրոնների՝ «թինկ-թանկ»-երի ծագման ուսումնասիրությունը միայն վերջերս է հայտնվել թուրքական գիտավերլուծական շրջանակների ուշադրության կենտրոնում: Այդ ուսումնասիրություններն ընդամենը մի քանիսն են[3], որոնցում ավելի շատ անդրադառնում են դրանց գոյության, տեսակների և քանակի, այլ ոչ թե կազմակերպչական, կառավարման և այլ բնույթի հարցերին: Այսօր Թուրքիայում ռազմավարական հետազոտություններ իրականացնող ավելի քան 50 կենտրոն կա, սակայն ոչ բոլորն են, որ կարողանում են իրենց անվանը համարժեք գործունեություն ծավալել: Մասնավորապես՝ այն կենտրոնները, որոնք զբաղվում են քաղաքական, սոցիալական, տնտեսական, ռազմական և այլ խնդիրներով, աշխատում են ձեռք բերել հետազոտական կենտրոնի համբավ երկրի ներսում, այլապես բավական արագ հեղինակազրկվում են և «դադարում» գործել: «Առաջին սերնդի» թուրքական կենտրոնների ի հայտ գալը պայմանավորված էր մի շարք գործոններով, դրանք բազմաթիվ թելերով կապված էին միջազգային և տարածաշրջանային կարևոր փոփոխությունների, Մերձավոր Արևելքում տեղի ունեցող արաբա-իսրայելական պատերազմների և, անկասկած, Կիպրոսյան խնդրի հետ:

[3] Fatih Keskin, Modern Demokrasilerde Yeni Politik Seckinler: Think Tanklar ve Politikadaki Rolleri, Sosyo-Ekonomi Dergisi, Ocak-Haziran, 2005, Ankara, Murat Bilhan, Stratejik Araştırma Merkezleri, Stratejik Rapor NO: 30, Eylül, 2008, Istanbul.

Տարածաշրջանային այս երկու խնդիրներն անմիջական ազդեցություն ունեցան թուրքական պետականության ռազմավարական նոր մտքի ձևավորման վրա և դարձան առաջին կենտրոնի՝ DPE-ի[4] (Dış Politika Enstitüsü - Արտաքին քաղաքականության ինստիտուտ) ստեղծման նախահիմքը: Բայց պետական նշանակության խնդիրների քննարկմամբ, վերլուծմամբ Թուրքիայում զբաղվում էին մտավոր հզորություններով չզիջող Ազգային անվտանգության, պաշտպանության նախարարության և արտգործնախարարության հատուկ «անալիտիկ» խմբերը, որոնց համապատասխան աշխատանքը պետության միակ վստահելի աղբյուրն էր: Այսպիսի խմբերը միայն 90-ական թվականներին կարողացան ըմբռնել կենտրոն ունենալու կարևորությունը, ընդ որում՝ այդ քայլին գնացին պետության անմիջական հրահանգով:

1974թ. ստեղծված Արտաքին քաղաքականության ինստիտուտի մեկնարկային աշխատանքը, որն արևմտյան նորույթ էր Թուրքիայի համար, սկզբում չխրախուսվեց պետության կողմից: Վերջինս խիստ մոտեցում ուներ արտաքին քաղաքականությանն առնչվող ցանկացած խնդրի հանդեպ և համարում էր, որ նման վերլուծությունները միայն իր և մասնավորապես ԱԳՆ-ի խնդիրն է: Կենտրոնի հիմնադրման գործում մեծ էր նաև արտաքին քաղաքականության գծով ԱՄՆ խորհրդի դերը, որին մասնակցություն ունեցավ ներկայումս գործունեությունը դադարեցրած իտալական հետազոտական մի ինստիտուտ: Վերջիններիս մեթոդաբանական մշակումները ներդրվեցին DPE-ի աշխատանքային կանոնակարգման մեջ[5]:

Եթե Թուքիայի արտաքին քաղաքական խնդիրները գերատեսչական մարմիններին վերապահված ֆունկցիաներ էին և փակ համակարգով էին գործում, ապա DPE-ն իր «մտավոր արտադրանք»-ին հաղորդակից դարձրեց հասարակության լայն խավերին՝ դառնալով 70-ական թվականներին հիմնված միակ ու նաև առաջին ինքնաֆինանսավորվող կենտրոնը: Այն այսօր էլ սերտ գիտական կապեր ունի Իսրայելի (Բար-Իլանի համալսարանի «Բեգին Սադաթ» ռազմավարական հետազոտությունների կենտրոն) և ԱՄՆ-ի հետ[6], նաև ակտիվ համագործակցում է Թուրքիայի միջազգային հարաբերությունների և ռազմավարական հետազոտությունների հիմնադրամի (Türkiye Uluslararası İlişkiler ve Stratejik Araştrmalar Vakfı) հետ: Տեղակայված է Անկարայում գտնվող Բիլքենթի համալսարանում և վերջինիս ենթակառույցն է:

[4] Այս կենտրոնի ստեղծման հիմք է հանդիսացել «Foreign Policy-Արտաքին քաղաքականություն» ամսագիրը, որը հրատարակվում է 1971 թվականից: Բազմաթիվ կենտրոններ անցել են այսպիսի ճանապարհ, մասնավորապես՝ Եվրասիայի ռազմավարական հետազոտությունների կենտրոնը և այլն:

[5] С.В. Кизюков, Внешнеполитические концепции республиканской Турции, Бишкек, 2006, с. 148.

[6] С.В. Кизюков, նույն տեղում, с. 150.

Բիլքենթի համալսարանի հետ համատեղ աշխատելն ունի իր բացատրությունը: Սովորաբար համալսարանների ենթակայության տակ են անցնում այն կենտրոնները, իհարկե, սեփական նախաձեռնությամբ, որոնք մի քանի տարի գործելուց հետո սկսում են կորցնել իրենց հաստատուն դիրքերը նմանատիպ կառույցների կողքին (շատ դեպքերում ոչ ճիշտ աշխատանքային կազմակերպման, ոչ ակտուալ թեմաների ուսումնասիրության և սուղ ֆինանսական միջոցների պատճառով) և նախընտրում են իրենց «ինտելեկտուալ ռեսուրսների» վերարտադրման գործում ապավինել համալսարաններին: Հատկապես ֆոնդային բուհերի համար սա ընդունված կարգ է, այն շահավետ «գործարք» է դառնում՝ բարձրացնելով համալսարանների վարկանիշը, ինչպես նաև պատրաստի գիտական կադրերին ներգրավում կենտրոնների աշխատանքին: Կամ հակառակը՝ ոչ հայտնի կենտրոնները, ճանաչում ունեցող համալսարանների միջոցով փորձում են ամրապնդել իրենց հեղինակությունը: Բայց նույնիսկ այս պարագայում աշխատանքներն ուսումնասիրում են ոչ այնքան պետական առաջնահերթ խնդիրներ, այլ ավելի շատ հիշեցնում են ռեֆերատներ կամ դիպլոմային աշխատանքներ: Նման մեթոդիկան աստիճանաբար ՈւԿ-ին հեռացնում է իր առանցքային խնդիրներից: Այն դառնում է «հարմարվող», փոխակերպվում «ամբիոնի» կամ որևէ «ուսումնասիրող բաժնի»՝ իր գործունեությամբ դառնալով սակավ արդյունավետ:

Հենց սկզբից DPE-ի նկատմամբ պետության բացասական դիրքորոշումն ակնհայտորեն կասեցրեց նոր կենտրոնների ստեղծման հնարավորությունները: Այս իրավիճակը պահպանվեց ընդուպ մինչև 80-ականների կեսերը: Սակայն առաջին նախադեպը որոշակի հետաքրքրություն առաջացրեց առանձին պետական և մասնավոր կազմակերպությունների շրջանում, որոնք տարբեր ճանապարհներով փորձեցին ստեղծել իրենց սեփական կենտրոնները: 80-ականներին, թերևս, կային հիշատակման արժանի մի քանի կենտրոններ: Ճիշտ է թուրքական աղբյուրները նշում են, որ դրանք այն ժամանակներում «թինկ-թանկ» չեն կոչվել[7], այդուհանդերձ, երկար ճանապարհ են անցել և այսօր միանշանակ ձեռք են բերել «թինկ-թանկ»-ին բնորոշ աշխատանքային ոճ:

DPE-ից հետո ստեղծվեցին մի քանի հետաքրքիր կենտրոններ, առաջին անգամ սկսեցին ուսումնասիրվել նոր ուղղություններ: Սկզբնապես արտաքին քաղաքականության թեմատիկան գերակա էր: 1984թ. «թինկ-թանկային» համակարգով սկսեց աշխատել Թուրքիայի ԱԳՆ կառույցում հիմնված Թուրքարաբական ուսումնասիրությունների հիմնադրամը, այն 1991թ. (այլ տվյալնե-

[7] «Թինկ-թանկ»-ի վերաբերյալ մանրակրկիտ ուսումնասիրություն կատարած Մուսա Չաքմաքը նշում է, որ Թուրքիայում գործող «մտավոր կառույցները» իրենց աշխատանքային գործունեությամբ ամենևին էլ արևմտյան նմանատիպ կազմակերպությունների հետ չեն կարող համեմատվել:
Hasim Söylemez, Murat Uçar, Ne kadar demokrasi o kadar bilgi, Aksiyon Dergisi, sayi 287, http://www.aksiyon.com.tr/detay.php?id=14345

րով՝ 1992 թվականից[8]) վերափոխվեց Մերձավորարևելյան և բալկանյան հետազոտությունների հիմնադրամի (OBIV- Ortadoğu ve Balkan İncelemeleri Vakfı), որի ստեղծմանը մեծապես նպաստել է Թուրքիայի այդ տարիների արտգործնախարար Վահիթ Մելիհ Հալեֆօղլուն:

Այս կենտրոնի աշխատանքային ղեկավարումն ամբողջապես դիվանագիտական կորպուսի ձեռքում էր: Այն հիմնականում աշխատում էր պետական համակարգի համար, բայց այդ հանգամանքը չէր խանգարում, որպեսզի հասարակությունը հաղորդակից դառնա վերջինիս աշխատանքներին: Կենտրոնը հետագայում ունեցավ նոր մրցակից հանձին 1995թ. հիմնադրված SAM-ի (Stratejik Araştırmalar Merkezi-Ռազմավարական հետազոտությունների կենտրոն), որը նույնպես ԱԳՆ-ին ենթակա կառույց է: Այն իր արագ և որակյալ աշխատանքով ստվերում թողեց OBIV-ի հնացած աշխատառճը: Շատ դեպքերում պատճառը նաև տարածաշրջանային հետազոտությունների պահանջարկի բացակայությունն էր: Այս ամենը հանգեցրեց նրան, որ OBIV-ը անջատվեց ԱԳՆ-ից և սկսեց գործել անհամեմատ ավելի բաց կարգով՝ վերջինիս հետ պահպանելով նախկին հարաբերությունները: Սա դասական օրինակ է, որը ցույց է տալիս, որ նույն ոլորտներն ուսումնասիրող և միևնույն համակարգից «սնվող» կենտրոնները, անկախ իրենց կամքից, դառնում են մրցակիցներ, ինչի արդյունքում մեկի «ճակատագիրը» կանխորոշված է լինում՝ կամ կազմալուծվում է, կամ մյուսի հետ միանալով՝ շարունակում է աշխատանքը:

Հաջորդ էական փոփոխությունը բնավ քաղաքագիտական կամ տարածաշրջանային հետազոտություններ կատարող կառույցի հետ կապված չէր, ինչը սովորաբար նորաստեղծ «թինկ-թանկերի» համար համարվում էր ուսումնասիրվող ոլորտների անբաժանելի մաս: Խոսքը ժողովրդավարական արժեքների ներմուծման և տարածման համար նախատեսված կազմակերպությունների մասին է: 1980-ականների վերջին թուրք հասարակությանը եվրոպական արժեքներին ծանոթացնելու և դրան ինտեգրելու քայլեր ձեռնարկվեցին, որին իրենց մասնակցությունն ունեցան որոշ ոչ պետական պատվերային սկզբունքով աշխատող հիմնադրամներ:

Հայտնի է, որ ժողովրդավարացման ծրագրերով գործող բազմաթիվ եվրոպական կազմակերպություններ (բնականաբար՝ սեփական ֆինանսավորմամբ) այսօր մասնաճյուղեր են բացել տարբեր երկրներում՝ դրանք դարձնելով «դեմոկրատիայի գործիքներ»: Առաջ եկավ պատվերով աշխատող հիմնադրամների առաջին սերունդը: 1987թ. հիմնադրվեց Թուրքիայի դեմոկրատիա հիմնադրամը (TDV-Türkiye Demokrasi Vakfi)՝ «Քոնրադ Ադենաուր» հիմնադրամի անմիջական աջակցությամբ: Թվում էր, թե արտաքին կազմակերպությունների կողմից ազատամիտ գաղափարների ներմուծումն անհաջո-

[8] http://www.obiv.org.tr/tarih.html

ղության կմատնվի, սակայն շատ չանցած նույնատիպ «առաջադրանքով» ստեղծվեց ևս մեկ կենտրոն: Այս անգամ «Ֆրիդրիխ Էբերտ»-ի հիմնադրամի ուժերով ստեղծվեց TÜSES-ը (Türkiye Sosyal Ekonomik Siyasal Araştırmalar Vakfi) Թուրքիայի սոցիալական, տնտեսական, քաղաքական հետազոտությունների հիմնադրամը:

Այս երկու հիմնադրամների ստեղծումը բավական ուշագրավ հարցադրումներ է առաջ բերում. հաշվի առնելով, որ վերջիններիս «մտավոր արտադրանք»-ը միայն ժողովրդավարական սկզբունքների վրա էր հենված, ապա դրանց ստեղծման ժամանակահատվածը պետք է որ պատահականորեն ընտրված չլիներ:

Դիտարկելով թուրքական հասարակության դանդաղ տեմպերով ընթացող փոփոխությունները՝ կարելի է պնդել, որ արդյունավետության տեսանկյունից «արևմտագաղափարակիր» այդ կառույցների դերը բավական մեծ է եղել: Թեև այս երկու կենտրոնները շարունակում են գործել, սակայն նախկին հեղինակությունն ու ազդեցությունը չունեն: Նրանց փոխարինելու եկան ավելի բազմաշերտ հիմնահարցերով զբաղվող, նույն գաղափարներով առաջնորդվող կազմակերպություններ, առաջ քաշվեցին այնպիսի խնդիրներ, որոնք նախկինում ուղղակի դեմ էին համարվում Թուրքիայի ազգային շահերին: Մասնավորապես՝ վտանգավոր էր խոսել քրդական հարցի, Հայոց ցեղասպանության, Թուրքիայում բնակվող ազգային փոքրամասնությունների իրավունքների հետ կապված խնդիրների մասին: Այս խնդիրներից առաջինի և վերջինի վերաբերյալ ծավալվող զարգացումների շուրջ դրական քննարկումներ կատարում է միայն TESEV[9]-ի՝ Թուրքիայի տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամի դեմոկրատացման նախագծով խնդիրների ուսումնասիրման բաժինը, որի ղեկավարը Թուրքիայում հայ կաթոլիկ համայնքը ներկայացնող և «Ակօս» թերթի գլխավոր խմբագիր Էթիեն Մահչուփյանն է:

Այս սերնդի ՈՒԿ-ների մեջ մեծ ճանաչում ունի նաև 1985թ. հիմնված Մարմարայի խմբի ռազմավարական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամը (Marmara Grubu Stratejik ve Sosyal Araştırmalar Vakfı): Առաջին հայացքից թվում է, թե այս հիմնադրամը միայն սոցիալական ռազմավարության հետ կապված ծրագրերի հայեցակարգային մշակումներով է զբաղված: Իհարկե, այս գործոնը կա, բայց դա միայն իրական աշխատանքն ստվերելու միջոց է: Այստեղ կենտրոնացված մարդկային ռեսուրսները «չափավոր քեմալականներ» են, այսինքն՝ «հանրապետականության» ջատագովներ:

[9] Հիմնադրամը (հիմն. 1994թ.) ֆինանսավորվում է միանգամից մի քանի երկրների՝ Նիդեռլանդների, Մեծ Բրիտանիայի, մի շարք կազմակերպությունների՝ Սորոսի «Բաց Հասարակություն» հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից, TESEV Başkanı Can Pakerden ilginç açıklamalar, http://haber10.com/haber/26315

Հետաքրքիր է, որ ներկայումս Մարմարայի խումբը (այսուհետ՝ ՄԽ) ակտիվ կապեր է հաստատում այնպիսի երկրների հետ (Ադրբեջան, Մոնղոլիա), որոնք հնարավորություն են ունենում տեղեկատվության փոխանակման և միասնաբար կազմակերպված նեղ հավաքների միջոցով հաղորդակցվել «թյուրքական աշխարհի վերջին նվաճումների» հետ:

Չնայած ՄԽ-ն ոչ պետական կազմակերպություն է, սակայն ՄԱԿ Սոցիալական և տնտեսական խորհրդում ներկայացնում է Թուրքիան՝ որպես խորհրդատու: Բացի դրանից, հավատարմագրված կարգով համագործակցում է ԵԱՀԿ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի պես կազմակերպությունների հետ, նաև Բալկանյան քաղաքական ակումբի անդամ է: ՄԽ-ն Թուրքիայի առևտրային պալատի և Արդյունաբերողների և գործարարների հիմնադրամի համատեղ գնահատականներով ճանաչվել է 2004 և 2005թթ. Թուրքիայի լավագույն ոչ պետական կազմակերպություն: Այն կարելի է դասել այնպիսի ՈւԿ-ների կազմում, որն առաջին անգամ փոփոխություն մտցրեց կադրային քաղաքականության մեջ[10]:

Հատկանշական է, որ DPE-ում, OBIV-ում հասկանալի պատճառներով մշտապես ընդգրկվում էին ԱԳՆ գործող կամ պաշտոնաթող դիվանագետներ, ՄԽ պարագայում, որը սոցիալական հետազոտություններով էր զբաղվում, աստիճանաբար աշխատանքներին ներգրավվեցին թուրքական բանակի սպայակազմի ծառայողներ, որոնց ներկայությունն ու մասնագիտությունը չէին համապատասխանում կազմակերպության ուսումնասիրած ոլորտներին: Ռազմական, պաշտպանական համակարգի աշխատակիցների ներգրավումը ոչ պետական ՈՒԿ համակարգ ունի խորքային պատճառներ: Այն մինչ օրս էլ պետության «ուժեղ ձեռքի» կողմից կենտրոնը ներսից վերահսկելու և աշխատանքները «ճիշտ կազմակերպելու» համար ձեռնարկված գործընթաց է: Կենտրոնների ազատությանը հակազդելու պրակտիկան դարձել է ոչ միայն այս ոլորտի անբաժանելի մասը, այլև տարիների ընթացքում հղկվել և ձեռք է բերել որոշակի ձևաչափ: Այսինքն՝ կենտրոններն աստիճանաբար կախվածության մեջ են հայտնվում՝ դառնալով «ռազմական խունտայի» փաստացի կամակատարը, որտեղ քաղաքացիական աշխատանքային իրավունքներին փոխարինելու է գալիս զինվորական կանոնադրությունը: Եվ սա բնական է, քանի որ Թուրքիայի քաղաքական կյանքում զինվորականության դերն ու նշանակությունը բավական մեծ են:

ՄԽ-ին պատկանում է ևս մեկ նորամուծություն. առաջին անգամ թուրքական «ուղեղային կենտրոնի» կառուցվածքային համակարգում ստեղծվեց Ակադեմիական խորհուրդ, որը զբաղվում էր ներսում գիտական կադրերի

[10] http://www.marmaragrubu.org/hakkimizda.htm

պատրաստման աշխատանքներով: Հետագայում այս նորամուծությունը որևէ կերպ չարտացոլվեց այլ ՈՒԿ-ների աշխատանքային համակարգում, դրա փոխարեն ստեղծվեցին միայն գիտական կամ փորձագիտական խորհուրդներ, որոնց գործառույթները բոլորովին այլ էին:

Հիմնականում այսպես է ընթացել 1970-1990թթ. թուրքական կենտրոնների կայացման առաջին փուլը: Այս ընթացքում ստեղծվեցին մի քանի կենտրոններ, որոնց ուսումնասիրություններն ու հետաքրքրություններն ընդգրկում էին քաղաքագիտականից մինչև իսլամական հետազոտություններ:

2. «Երկրորդ սերնդի» թուրքական վերլուծական կենտրոնները

Առաջին կենտրոններն այդպես էլ չընկալվեցին որպես «թինկ-թանկ»-եր, քանի որ դրանց մեջ չէին տեսնում ամերիկյան ճանաչված կազմակերպությունների հզորությունը: Թուրքական նոր կենտրոններ հիմնելու գաղափարը միանշանակ կապվում է այդ երկրի նախագահ Թուրգութ Օզալի անվան հետ: Օզալն այս գաղափարը փայփայում էր դեռ 80-ականներին: Հայտնի է, որ թուրքական վերնախավը և հատկապես պետնախարարները, մշտապես մեկնելով ԱՄՆ, որոշակի հետաքրքրություն էին ցուցաբերել «մտավոր» կենտրոնների նկատմամբ: Այսպես՝ նախկին պետնախարար Հասան Ջելալ Գյուզելը 1970թ. վերջին աշխատանքային այցով մեկնել է վաշինգտոնյան մի վերլուծական կենտրոն, ներկա գտնվել «սեմինար» կարգով ընթացող ԽՍՀՄ հնարավոր փլուզման թեմայի քննարկմանը: Բավական տպավորված այդ քննարկումից՝ անմիջապես Թուրքիայում նմանատիպ կենտրոն հիմնելու գաղափար է հայտնել այն ժամանակ վարչապետի տնտեսական խորհրդական Օզալին: Օզալը հարցին չափավոր մոտեցում է ունեցել և ասել, որ ամերիկյան տիպի կառույցների հիմնումը Թուրքիայում հնարավոր չէ[11]:

«Երկրորդ սերնդի» վերլուծական կենտրոնների հետ կապված զարգացումները սկսվեցին 90-ական թթ. սկզբին: Օզալը, որն արդեն Թուրքիայի նախագահն էր և ուներ մեծ լիազորություններ, նաև լիբերալացման ու քաղաքացիական հասարակության ձևավորումը համարում էր անհրաժեշտություն Թուրքիայի համար, աջակցեց ՈՒԿ-ների ստեղծմանը: Ժամանակը պատահականորեն չէր ընտրված: Նախ՝ տեղի էին ունեցել մի քանի տարածաշրջանային և աշխարհառազմավարական շրջադարձեր. ԽՍՀՄ և Բալկանյան սոցճամբարի փլուզումը, իրաքյան առաջին պատերազմն այն հիմնական գործոններն էին, որոնք արագացրին ՈՒԿ-ների ստեղծումը: Այս ամենին զուգահեռ՝ Թուրքիան ուներ որոշ կազմակերպչական հարցեր գիտակրթա-

[11] Muhsin Öztürk-Mesut Çevikalp, Ankara'nın yeni aktörleri, Aksiyon dergisi, Sayı: 715 - 18.08.2008, http://www.aksiyon.com.tr/detay.php?id=30964

կան համակարգի հետ կապված: Նման կենտրոնների գործունեության համար անհրաժեշտ էր գիտության ձեռքբերումների օգտագործում, առանց որի՝ ՈւԿ-ների համակարգային-կառուցվածքային կազմակերպումը, նույնիսկ սաղմնային վիճակում, հնարավոր չէր պատկերացնել:

Հայտնի է, որ Միացյալ Նահանգներն այն տերությունն է, որը, թերևս, լավագույնն է ըմբռնել գիտելիքների կարևորությունը և այն օգուտները, որ կարելի է ստանալ գիտական հետազոտությունները գործնական կյանքում ներդնելու արդյունքում: Գերտերության հզորությունը, առաջին հերթին, պայմանավորված է այն բարձր կարգավիճակով, որ ունի գիտաստեղծագործական գործունեության ոլորտն ամերիկյան հանրությունում[12]:

Վերոհիշյալից ելնելով՝ նշենք, որ Թուրքիան երբեք գիտության կազմակերպման հարցերում նախաձեռնություն չի ցուցաբերել (բացի Աթաթուրքի բարեփոխումներից), և դա էր պատճառը, որ ՈւԿ առաջին փորձը դրական ուղիով չընթացավ, քանի որ «ինտելեկտուալ հասարակություն» հանրապետական Թուրքիայում որպես այդպիսին չկար: Միայն 1992թ. Թուրքիայի տարբեր քաղաքներում բացվել են առնվազն 45 համալսարան՝ պետական և ֆոնդային կարգավիճակով: Համալսարանների և ՈւԿ-ների հիմնադրման ժամանակահատվածները համընկնում են. եթե սա պետական քաղաքականություն է՝ ուղղված այն բանին, որ երկուսի հարաբերակցությունը տարիներ անց չթուլանա, այլ զուգահեռ սերտաճի, ապա երևույթն առանձին ուսումնասիրության կարիք ունի: Ընդ որում՝ այսպիսի միտում նկատելի էր նաև 2003-2008թթ., երբ երկու նոր հիմնադրված համալսարանների դիմաց բացվում էր մեկ ռազմավարական հետազոտական կենտրոն: Մինչև 2000թ. ընկած ժամանակահատվածում ստեղծվեցին շուրջ տասը ռազմավարական հետազոտական կենտրոններ, հիմնադրամներ:

Օզալի մահից (1993թ. ապրիլի 17) հետո նրա գաղափարներն իրականացնելու գործընթացը հանձն առավ պետնախարար և կառավարության խոսնակ Յլդըրըմ Աքթունան: 1993թ. հուլիսին հարցը մտավ օրակարգ, որոշվեց, որ ԿՀՎ-ին մոտ կանգնած ամերիկյան հայտնի մասնագետների օժանդակությամբ պետք է ստեղծվի վերլուծական կենտրոն: Տեղի և ամերիկացի մասնագետների դռնփակ քննարկումից հետո հիմնվեց PPM-ը (Politik Psikolojik Merkezi) «Քաղաքական հոգեբանական կենտրոն»-ը: ԿՀՎ ներգրավվածությունը նախագծում կասկածի տեղիք տվեց: Աշխատանքները չսկսած՝ հասարակությունում սկսվեցին բացասական քննարկումներ, որոնց առանցքային թեման էր, թե ում է ծառայում այն՝ Թուրքիայի, թե ԱՄՆ

[12] Գ.Տեր-Հարությունյան, «Ուղեղային» կենտրոնների մասին, 23. 05. 2006 http://www.noravank.am/am/?page=analitics&nid=227

շահերին[13]: Կենտրոնը մի քանի ամիս անց սկսեց գործել Անկարայի քաղաքական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամի հովանու ներքո՝ դրանով իսկ վերջ դնելով իր գործունեությանը:

1990-ական թթ. ՈւԿ-ների մեջ կարևոր դերակատարում ուներ հայտնի ASAM-ը՝ Եվրասիայի ռազմավարական հետազոտությունների կենտրոնը, որի հիմնադրման մտահղացումը Թուրքիայի ակադեմիայի աշխատակիցներին էր պատկանում. գիտության մարդկանց կողմից կենտրոն հիմնվում էր առաջին անգամ: 1994թ. այն հանդես եկավ «Եվրասիա» հիմնադրամ անունով, 1999թ. սկսեց գործել ներկայիս անվանումով և անջատվելով վերջինիս համակարգից՝ Ստամբուլից տեղափոխվեց Անկարա: Հետաքրքիր է, որ կառույցը հասարակ ամսագրից վերածվել է «ուղեղային կենտրոնի» և իրենց բնորոշմամբ՝ Թուրքիայի առաջին խոշոր «թինկ-թանկն» է: Կենտրոնի ստեղծումը թուրքական «թինկ-թանկ»-երի պատմության մեջ մտել է «Փետրվարի 28-ի օժանդակություն»[14] անունով: Նշենք, որ օժանդակության թիկունքին կանգնած էին Թուրքիայի կարևոր կառույցները, մասնավորապես՝ զինված ուժերի գլխավոր շտաբը: Կենտրոնի հիմնադրման գործի կազմակերպիչն էր «երիտռեֆորմիստ» Ումիթ Օզդաղը[15]՝-ը, ով կրթություն ստանալով արտասահմանում՝ յուրացրել էր տեղի ՈՒԿ աշխատանքային ռազմավարությունը: Սակայն կենտրոնն այդպես էլ անկախ չգործեց. հստակ է, որ Ումիթ Օզդաղի անհատական գործոնը (Ազգայնական շարժում կուսակցության և «Գորշ գայլեր» խմբակցության անդամ է) նաև իր բացասական հետքը թողեց ASAM-ի աշխատանքի վրա: Այն դարձավ Թուրքիայի ռազմական ուժերի և Ազգայնական շարժում կուսակցության ակտիվիստների համար նախատեսված քարոզչական մեծ ապարատ, որի գլխավոր զենքը Հայկական հետազոտությունների ինստիտուտն (Ermeni Araştırmaları Enstitüsü) էր. այն գործում էր կենտրոնին կից: Կենտրոնի գործունեությունն ու հեղինակությունը Թուրքիայի համար անգամ ռազմավարական նշանակություն ուներ, այն պետության «փափուկ ուժ»-ն էր, միայն թե վերջին շրջանում կենտրոնը ծանր ֆինանսական դժվարություններ է կրում և փակման եզրին է:

[13] Hasim Söylemez-Murat Uçar, Ne kadar demokrasi okadar bilgi, Aksiyon dergisi, Sayı: 287 - 03.06.2000,http://www.aksiyon.com.tr/detay.php?id=14345

[14] Սա, ըստ երևույթին, կապված է 1997թ. փետրվարի 28-ին զինվորականների հայտնի հայտարարության հետ, որի հետևանքով հրաժարական տվեց իսլամիստական կողմնորոշում ունեցող վարչապետ Նեջմեթթին Էրբաքանի կառավարությունը: Այս հայտարարությունը որոշ մասնագետներ համարում են Թուրքիայում զինվորականության՝ քաղաքականությանը միջամտելու հերթական քայլ:

[15] Օզդաղի կենսագրության մասին մանրամասն տե՛ս Սիմավորյան Ա., «21 դար թուրքական ինստիտուտի վերաբերյալ», «Գլոբուս. Ազգային անվտանգություն» տեղեկագիր, նոյեմբեր, 2008թ., № 4:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը, որի նախնական ազդակներն ի հայտ եկան 2008թ. աշնանը, անդրադարձան նաև Թուրքիայի տնտեսության վրա: Ամբողջ երկու շաբաթ թուրքական որոշ իշխանամետ թերթեր և համացանցային վերլուծական-տեղեկատվական կենտրոններ փորձում էին հասկանալ, թե ինչու նմանատիպ կառույցների շարքում տուժեց հատկապես ASAM-ը: Կենտրոնը ֆինանսավորող «Ուլքեր» կոնցեռնը այլևս չհատկացրեց տարեկան մեկուկես միլիոն դոլարի օժանդակությունը[16]: Ներկայումս կենտրոնը դադարեցրել է ակտիվ աշխատանքները, մասնավորապես՝ Հայկական հետազոտությունների ինստիտուտն ազատ է արձակել աշխատակիցներին:

Ժամանակակից թուրքական վերլուծական կենտրոնների գլխավոր առանձնահատկությունն այն է, որ դրանցից յուրաքանչյուրը գաղտնի կամ բացահայտ կերպով այս կամ այն կուսակցության, պետական որոշ համակարգերի գաղափարախոսությունն ու տեսակետները տարածողն է: Այդպիսի իրավիճակ գերակշռում է հատկապես հետևյալ կենտրոններում (ներկայացնում ենք աղյուսակի տեսքով).

Կենտրոնի անվանումը	գաղափարախոսական կողմնորոշումը	համագործակցող ուժը
21 դար թուրքական ինստիտուտ	ազգայնամոլական	Ազգայնական շարժում կուսակցություն, Գորշ գայլեր
ASAM-Եվրասիայի ռազմավարական հետազոտությունների կենտրոն	ազգայնամոլական	զինվորականություն (ուլտրաազգայնական ձախ թևի հետ)
SETA-քաղաքական, տնտեսական, հասարակական հետազոտությունների հիմնադրամ	պահպանողական	մոտ է պետական ապարատին, մասնավորապես իշխող Արդարություն և զարգացում կուսակցությանը

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, կենտրոնների համագործակցության շրջանակները լայն են, ամեն կենտրոն ունի իր աջակիցն ու համախոհը: Այս ամենը հետաքրքիր է հատկապես նրանով, թե, ի վերջո, կենտրոններն են դիմում այս քայլին՝ հետապնդելով որոշակի շահեր, թե պետական համակարգն է փորձում օգտագործել այդ ներուժը: Երկուսի առկայությունն էլ կա, տեղ-տեղ ուժեղ կամ թույլ արտահայտված: Բայց մեծ մասամբ կենտրոնի ղեկավարներն իրենք են գնում այդ համագործակցությանը, քանի որ դա երբեմն դեպի քաղաքական իշխանություն տանող միակ ու

[16] Muharrem Sarikaya, Kriz `düşünceyi` de vurdu... Sabah, 11-18-2008:

դյուրին ճանապարհն է:

Կան կենտրոններ, որոնք երբեմն քաղաքական հետազոտություններ իրականացնելիս, համապետական ընտրությունների ժամանակ ակամա դառնում են որևէ կուսակցության լոբբիստական աշխատանքների մասնակիցը: Այսպիսով հասկանալի է դառնում, որ ազատ վերլուծություններ, որպես այդպիսին, չեն լինում, ինչը հեղինակազրկում է կենտրոնի սովորական աշխատանքը:

Ամփոփելով՝ հավելենք, որ 2000թ. սկսած, տարեկան միջին հաշվով Թուրքիայում բացվել են երեք-չորս կենտրոններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Федор Войтоловский,* «Производство» интеллектуального пространства мировой политики, http://www.intertrends.ru/eleventh/008.htm
2. *А. И. Сенаторов,* Японские «мозговые центры», http://www.japanassoc.ru/publikacii/nauka/japon-opyt-2007-1/japonskie-mozgovye-centry.html
3. *Fatih Keskin,* Modern Demokrasilerde Yeni Politik Seckinler: Think Tanklar ve Politikadaki Rolleri, Sosyo-Ekonomi Dergisi, Ocak-Haziran, Ankara, 2005.
4. Murat Bilhan, Stratejik Araştırma Merkezleri, Stratejik Rapor NO: 30, Eylül, Istanbul, 2008.
5. *С.В. Кизюков,* Внешнеполитические концепции республиканской Турции, Бишкек, 2006.
6. *Hasim Söylemez, Murat Uçar,* Ne kadar demokrasi o kadar bilgi, Aksiyon Dergisi, Sayı: 287, http://www.aksiyon.com.tr/detay.php?id=14345
7. TESEV Başkanı Can Pakerden ilginç açıklamalar, http://haber10.com/haber/26315
8. *Muhsin Öztürk-Mesut Çevikalp,* Ankara'nın yeni aktörleri, Aksiyon dergisi, Sayı: 715 - 18.08.2008, http://www.aksiyon.com.tr/detay.php?id=30964
9. *Գ. Տեր-Հարությունյան,* «Ուղեղային» կենտրոնների մասին, 23. 05. 2006, http://www.noravank.am/am/?page=analitics&nid=227
10. *Սիմավորյան Ա.,* «21-րդ դար թուրքական ինստիտուտ»-ի վերաբերյալ, «Գլոբուս. Ազգային անվտանգություն», 2008թ., № 4:.
11. *Muharrem Sarikaya,* Kriz `düşünceyi` de vurdu..., «Sabah gazetesi», 11-18-2008